№ 5 (9)

ISSN 1829-4820



Филиал МГУ имени М.В.Ломоносова
в г. Ереване

Журнал входит в список
периодических изданий ВАК РА

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

ЕРЕВАН 2020

Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղ

Филиал Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

M. Lomonosov Moscow State University, Yerevan branch

ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գիտամեթոդական հանդես

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ

Научно-методический журнал

MAIN ISSUES IN MODERN RUSSIAN STUDIES

Scientific Methodological Journal

5 (9)

ԵՐԵՎԱՆ 2020
ЕРЕВАН 2020
YEREVAN 2020

Երաշխավորվել է տպագրության Երևան քաղաքում Մոսկվայի Մ.Վ.Լոմոնոսովի անվան պետական համալսարանի մասնաճյուղի գիտական խորհրդի կողմից

Печатается по решению Ученого совета филиала Московского государственного университета им. М.В. Ломоносова в г. Ереване

Reprinted by decision of the Academic Council of the branch of the Moscow State University M.V. Lomonosov in Yerevan

«ՌՈՒՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ» գիտամեթոդական հանդեսի առաքելությունը ՀՀ-ում ռուսագիտության՝ որպես լեզվաբանության ճյուղի մասսայականացումն է, ռուսաց լեզվի ուսումնասիրման նկատմամբ հետաքրքրություն առաջացնելը, օտարերկրյա հետազոտողների ուշադրությունը հայ գիտնականների մշակումներին հրավիրելը, դրանով իսկ հայ ռուսագիտության մասսայականացումն է, համատեղ ծրագրերի, դրամաշնորհների մշակման հնարավորության ընձեռումը, մագիստրոսների ներգրավումը հետազոտական աշխատանքներին:

Назначение научно-методического журнала «**ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ**» рассматривается нами в ракурсе популяризации в РА русистики как отрасли языкознания, привлечения интереса к изучению русского языка, привлечения внимания зарубежных исследователей к разработкам армянских ученых и тем самым популяризации армянской русистики, возможности разработки совместных проектов, грантов и пр., привлечения магистрантов к научно-исследовательской работе.

ПРОБЛЕМЫ СОВРЕМЕННОЙ РУСИСТИКИ // Научно-методический журнал, №5 (9). / Глав. ред. Саркисян И.Р.; сост.: Акопян А.С. – Ереван: Изд-во МГУ, 2020. – 180 с.

ISSN 1829-4820

*Журнал входит в список периодических изданий **ВАК РА***

ORCID: 0000-0001-9263-6791

© Филиал МГУ им. М.В. Ломоносова в г. Ереване

Հասցե՝ ՀՀ, Երևան, Վարդանանց 17, հեռ՝ (+37411) 900 110 – 101, 102:
Наш адрес: РА, г. Ереван, ул. Вардананц 17; тел. (+37411) 900 110 – 101, 102.
Address: Vardanants St. 17, Yerevan, RA; tel.: (+37411) 900 110 – 101, 102.
Էլեկտրոնային փոստ՝ (электронная почта) e-mail: po@msu.am

МОДАЛЬНЫЕ СЛОВА В РЕЧИ, ИХ СТИЛИСТИЧЕСКОЕ ПРИМЕНЕНИЕ И ОСОБЕННОСТИ (НА ПРИМЕРЕ ПОЭМ ОВАННЕСА ТУМАНЯНА)

Арменуи Мнацакановна Мхитарян
mkhitaryanarmenuhi@mail.ru

К.ф.н., доцент,
доцент кафедры родного языка и методики его преподавания
Армянский государственный педагогический университет имени Хачатура Абовяна,
Ереван, Республика Армения

АННОТАЦИЯ

Модальные слова используются с личными формами глагола, придавая им дополнительный смысл, усиливая уже существующее глагольное наклонение, или придавая им новый оттенок и/или значение, то есть один модальный смысл меняется на другой.

Если наклонения глагола выражают объективное или субъективное отношение говорящего или автора к действию, чего, однако, очень часто недостаточно, чтобы выразить объективное и субъективное отношение говорящего или автора к действию, которое возможно выразить, то этот пробел в речи восполняется с помощью модальных слов. Таким образом, модальные слова выражают объективное и субъективное отношение говорящего или автора к глагольному действию. В этом и заключается особенность модальных слов, а именно: выражать такую коммуникативную окраску, которая отсутствует в формах глагольного наклонения.

Ключевые слова: модальные слова, стилистическое применение, стилистические особенности, Ов. Туманян, поэма.

Հայտնի է, որ ձևաբանական մակարդակում լեզվական միավորների ընտրության հնարավորությունները, դրանց ոճական, արտահայտչական նրբերանգները սահմանափակ են՝ պայմանավորված լեզվի նորմայի պահանջով, քանի որ ձևաբանական կարգերի ոճական կիրառությունը նորմատիվ բնույթ ունի՝ ի տարբերություն բառագիտական և շարահյուսական կարգերի: Չնայած նշված սահմանափակությանը՝ խոսքի մեջ, հատկապես գեղարվեստական ստեղծագործություններում խոսքի մասերի ոճական արժեքն ակնհայտ է: Յուրաքանչյուր խոսքի մաս իրեն բնորոշ առանձնահատկությամբ է ձևավորում պատկերավոր խոսք: Հայերենում քերականական մի շարք ձևեր կարող են գործածվել թե՛ ուղիղ, թե՛ փոխաբերական իմաստներով [3: 247–248]:

Պ. Պողոսյանը գրում է. «Խոսքի մասերը նախադասության մեջ և խոսքում հանդես են գալիս իրենց բառային-ֆիզիկական, խոսքի մասային, իմաստաբանական, քերականական և ոճաբանական առանձնահատկություններով: ... Խոսքի մասերը միմյանցից տարբերվում են ինչպես ընդհանուր, այնպես էլ մանավոր ոճական առանձնահատկություններով: Ընդհանուրն այն է, որ գոյականը, ածականը, բայը, մակբայը և դերանունը խոսքի մեջ կարող են գործածվել փոխակերպաբար, այնինչ մյուս խոսքի մասերը փոխակերպաբար չեն գործածվում» [5: 221–222]:

Լ. Եզեկյանը նշում է. «Հայերենի խոսքի մասերի համակարգում ոճական ավելի մեծ հնարավորություններ ունեն գոյականի, ածականի, դերանվան և բայի քերականական կարգերը, մասամբ նաև ձայնարկությունները, եղանակավորող բառերն ու այլ սպասարկու բառերը» [3: 249]:

Հայտնի է, որ հայերենում ձայնարկություններն ու եղանակավորող բառերը (վերաբերականները) առանձնանում են իբրև վերաբերմունքային խոսքի մասեր, որոնք զուրկ են թե՛ նյութական, թե՛ քերականական իմաստներից, նախադասության անդամ չեն դառնում, բայց և նախադասության ձևավորման գործընթացում պակաս կարևոր դեր չեն կատա-

րում: Դրանք երկուսն էլ արտահայտում են խոսողի կամ հեղինակի վերաբերմունքը, բայց և տարբերվում են իրարից:

Եղանակավորող բառերը արտահայտում են խոսողի կամ հեղինակի իրական (օբյեկտիվ կամ սուբյեկտիվ) մտածական կամ դատողական վերաբերմունքը, իսկ ձայնարկությունները՝ զգացական վերաբերմունքը: Այս երկու խոսքի մասերը տարբերվում են թե՛ իմաստային, թե՛ ոճական-արտահայտչական առումներով: Նշենք նաև, որ եղանակավորող բառերը դարեր շարունակ համարվել են մակբայներ. որպես առանձին խոսքի մաս դիտարկել են նախ՝ Մ. Աբեղյանը, ապա՝ Ս. Աբրահամյանը [1: 257] և ուրիշներ [3: 245]: Ս. Աբրահամյանն այն տարանջատել է մակբայներից և անվանել եղանակավորիչ: Եղանակավորող բառերը եղանակավորում կամ երանգավորում են խոսքը, նախադասությունը կամ նրա որևէ անդամը: Եղանակավորող բառի տեսակով պայմանավորված՝ խոսողը կամ հեղինակն իր խոսքին հաղորդում է որևէ երանգ և ոճական լիցք:

Հայտնի է, որ բայի հինգ եղանակներն արտահայտում են խոսողի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ, սակայն երբեմն դրանք բավարար չեն արտահայտելու խոսողի կամ հեղինակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ այն բոլոր վերաբերմունքները, որոնք անհրաժեշտ է արտահայտել խոսքում: Ահա այս այլևայլ վերաբերմունքն էլ արտահայտում են վերաբերականները՝ յուրովի եղանակավորելով խոսքը [5: 326]:

Օրինակ՝ ***Երնեկ*** *իմանամ,* ***երնեկ*** *մինն ասեր,*

Թե այս րոպեին նա ինչ է անում (ՀԹ, 3, էջ 46):

Բերված օրինակում **իմանամ, ասեր** ըղձական եղանակի ստորոգյալներով արդեն իսկ արտահայտվում է համապատասխան եղանակավորությունը՝ հեղինակի բաղձանքը, իղձը գործողության վերաբերյալ, սակայն այդ վերաբերմունքն ավելի է ուժեղանում, երբ ավելանում է **երնեկ** վերաբերականը՝ դրանով իսկ լսողի կամ ընթերցողի ուշադրությունն էլ ավելի հրավիրելով դրա վրա:

Ներկայացնենք մեկ այլ օրինակ՝

Մի՛ լար, իմ աղջի՛կ, ինձ խոտովանի՛ր,
Սիրու՞մ ես ընդրան, քու կամքո՞վ փախար...
Եթե սիրում ես՝ էլ դարդ մի՛ անիր,
Պիտի պըսակեմ ես ձեզ ***անպատճառ****...* (ՀԹ, 3, էջ 102)։

Բերված օրինակում **պիտի պսակեմ** հարկադրական եղանակով ստորոգյալն արտահայտում է հեղինակի անհրաժեշտական վերաբերմունքը գործողության նկատմամբ, սակայն այդ իսկ վերաբերմունքը սաստկանում, ուժեղանում է, երբ նախադասություն է ներմուծվում **անպատճառ** բառը իր դարձյալ անհրաժեշտության եղանակային նշանակությամբ: **Անպատճառ** բառը ցույց է տալիս գործողության կատարման անհրաժեշտականություն, որը բնորոշ է հարկադրական եղանակին, սակայն այն կարող է գործածվել նաև բայի մյուս եղանակների հետ և նրանց ևս հաղորդել նույն անհրաժեշտական եղանակի նշանակությունը:

Օրինակ՝ *Սա էր մնացել, սա էլ* ***անպատճառ***

Մեր գլխին մի նոր կրակ է բերում, –
Նոր դրած բեգլար, կամ իգուր մի շառ,
Թե չէ ինչ ունի էս խուլ ձորերում (ՀԹ, 3, էջ 69)։

Բերված օրինակներից պարզ է դառնում, որ եղանակավորող բառերը, դրվելով բայի դիմավոր ձևերի վրա, կա՛մ նրանց եղանակային նոր երանգ ու նշանակություն են հաղորդում, այսինքն՝ մի եղանակային իմաստը փոխում են մեկ այլ եղանակային իմաստի, կա՛մ բայի դիմավոր ձևերի եղանակային իմաստներին հաղորդում են լրացուցիչ գաղափար:

Հաստատական վերաբերականները (իհարկե, այո, անշուշտ, անկասկած, անտարակույս, անպայման, անպատճառ, անխոս, իրոք (որ), իսկապես (որ), հարկավ, հավաստյավ, արդարև, հիրավի, իրավ (որ), իրավամբ, ինչպես չէ, ինչ խոսք, իսկ և իսկ և այլն) արտահայտում են նյութի ճշգրիտ, հավաստի, հաստատ, անառարկելի լինելը: Վերջիններս,

գործածվելով բայի դիմավոր ձևերի հետ, շեշտում են նրանց արդեն իսկ պարունակող հավաստիության եղանակային իմաստը:

Օրինակ՝ – *Աստված օրհնե քեզ, որդի.*

Բայց չէ որ մի տղամարդի
*Համար, **անշուշտ,** շատ են շատ*
Ամեն զենքից երկու հատ (ՀԹ, 3, էջ 33):

*Եվ **անշուշտ** մի օր, հանդերձյալ կյանքում,*
Երկրում թե այլուր, վերև՝ երկընքում,
Էն անհայտ ճամփով, որով նա գընաց,
Ես էլ կըթըռչեմ՝ աշխարքը թողած... (ՀԹ, 3, էջ 118):

Ի՜նչ երանություն՝ երկընքում սուզվել,
*Էն չըքնաղներին, որոնք, **անկասկած,***
Նըման չեն իսկի մեր հայոց կանանց... (ՀԹ, 3, էջ 138):

Լոկ երա՞զ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
*Երազ, թե **իրոք** – այդ միթե մի՞ն չէ,*
Երազն էլ երբ որ կարող է կանչել,
Կարող է հուզել, խընդացնել, տանջել... (ՀԹ, 3, էջ 114):

Այո վերաբերականը (խոսակցական **հա** տարբերակով), ինչպես նաև հաստատական այլ վերաբերականներ (սակավ դեպքերում նաև իհարկե, անշուշտ և այլն) երկխոսությունների մեջ կարող են հանդես գալ իբրև հաստատական նախադասություն, հատկապես հարց ու պատասխանի դեպքում՝ փոխարինելով ամբողջ նախադասությանը և խոսքին հաղորդելով սեղմություն և դիպուկություն: Խոսողը կամ հեղինակը այս նախադասություններով դրական պատասխան է տալիս խոսակցին: Առանձին դեպքերում հաստատական վերաբերականները կարող են ցույց տալ նաև համաձայնություն [1: 329]:

Օրինակ՝ *Ինձ ասա՛, հայր սուրբ, գաղտնիքը կենաց*
Արդյոք օրենք է աստծուց սահմանվա՞ծ...
Այո՛, *տեր աստված աշխարքին, որդյակ,*
Ապրելու համար տվել է օրենք... (ՀԹ, 3, էջ 59)։

– Ես քաղաքումը կարդում եմ, պապի։
*«**Հա՛,** տիրացու ես, բա ինչո՞ւ չասիր...»* (ՀԹ, 3, էջ 70)։

Հաստատական վերաբերականները կարող են գործածվել նաև մենախոսության մեջ և վերաբերել իր իսկ՝ խոսողի արտահայտած մտքին [1: 329]։

Օրինակ՝ *– Հա՛, իմացա, Գեվոն կըլնի.*
Իմ շան ահից ո՞վ սիրտ կանի... (ՀԹ, 3, էջ 21)։

Ինչպես տեսանք, **այո (**ժողովրդախոսակցական **հա)** վերաբերականը հիմնականում հանդես է գալիս որպես պատասխանական բառ, թեև հաճախ է գործածվում նաև համապատասխան նախադասության հետ՝ հաստատելով նրա արտահայտած այս կամ այն միտքը։

Նշենք նաև, որ **հավաստյավ, արդարև, հիրավի, անտարակույս, հարկավ, արդարև** վերաբերականները ևս ցույց են տալիս հավաստիություն, անառարկելիություն, հատուկ են բարձր ոճին և դրանց ներկայությունը խոսքին հաղորդում է վերամբարձ երանգավորում։

Ցուցական վերաբերականները (ահա, ահավասիկ, ժողովրդախոսակացական՝ հրես, հրեն) ցույց են տալիս ցուցում որևէ առարկայի, դրության, գործողության, հատկանիշի վրա, որը առկա է։ Ունեն իմաստային-ոճական նրբերանգներ։ **Ահա**-ն ավելի ակտիվ գործածություն ունի, իսկ **ահավասիկ**-ը փոխառություն է գրաբարից, որոշ գրքայնության երանգ է պարունակում, հնաբույր է, որի պատճառով էլ ավելի քիչ է գործածվում։

Վերջիններս կարող են արտահայտել.

- Առարկա, որ գտնվում է խոսողի մոտ.

Օրինակ՝ *Էն ձորի միջին **ահա** մի տնակ* (ՀԹ, 3, էջ 18)։

➢ Գործողություն, երևույթ, որ տեղի է ունենում խոսելու պահին, խոսելուց առաջ կամ խոսելու պահից անմիջապես հետո.

Օրինակ՝ *Նստած է Շահը. նրրա առաջին*
Ահա իրիկվան քեֆի սեղանը... (ՀԹ, 4, էջ 56):

Սակայն, ահա, այս տարի
Հայտվնեցավ թուրք Ալին... (ՀԹ, 3, էջ 28):

Նա բարի է, խոնարհ և հեզ,
Իրան անմեղ գառների պես,
Բայց և... ահա այսօր
Հրացանն առավ ու գնաց, որ
Ղաչաղ թուրքին անե հարցում... (ՀԹ, 3, էջ 30):

➢ Հենց նոր ասվածը կամ ասելիքը.

Օրինակ՝ *– Իմ փրկողը դու ես, որ կաս:*
Ահա էսպես բան լիներ մարդ,
Գրնար, ապրեր լի ու հանդարտ (ՀԹ, 3, էջ 130):

Կըլինեի հարգի մի մարդ,
Նույնիսկ եթե գըլուխըս այնժամ
Դատարկ լիներ հազար անգամ,
Քան թե հիմա իմ գըրպանը:
Ահա կյանքում էս է բանը... (ՀԹ, 3, էջ 130):

– Ես դեմ եմ, ասավ, բանաստեղծության,
Ջըզվեցնում է ինձ էդ երգի Մուսան:
Ո՛չ մըտքեր են պետք, ո՛չ ձիրք և ոչ խելք, –
Բառեր ու հանգեր – և ահա քեզ երգ (ՀԹ, 3, էջ 135):

➢ Անձ, առարկա, երևույթ, որ ժամանակով, տարածությամբ հեռու են խոսողից, խոսելու պահից, բայց խոսողը կամ հեղինակը հատուկ ոճա-

վորումով ներկայացնում է խոսակցին, ընթերցողին, կարծես թե ի տես: Այս կիրառությունը հանդիպում է հատկապես թվարկման դեպքում [1: 259–260]:

– Վե՛ր կաց, բանաստե՛ղծ, կանչում է էսպես,
Վե՛ր կաց, ներշընչվի՛ր, դուրս արի հանդես,
*Տանջվում են **ահա** եղբարքըդ թըշվառ,*
Հեծում, հալածվում աշխարհից աշխարհ։
Երկինք են հասել արցունք ու արյուն...
***Ահա**՝ քեզ համար բերել եմ ավյուն,*
Հույս տուր վրհատին, ըսփոփիր որբին,
Ուժ տուր պանդրխտին իր երկար ճամփին։
Նայիր՝ աղջիկը ի՛նչպես ծաղկել է,
Աչքերի մըթնից պայծառ ծագել է
Կյանքի արևը ու սիրտ է հուզում,
Անձնըվեր սիրո երգեր է ուզում...
*Ուրախ ու անհոգ գարուն էլ **ահա***
Բազմել է կանաչ սարերի վըրա,
Ջորերը լըցվել, փըռվել հովիտում.
Հավքերն երգում են, ծաղկունքը փըթթում... (ՀԹ, 3, էջ 129):

Երկբայական վերաբերականները (միթե, չլինի (թե), երևի (թե), գուցե (թե), միգուցե, արդյոք, ասես, իբր (թե), իբրև (թե), դժվար (թե), կարծես (թե), կարծեմ (թե), կարծյոք, ըստ երևույթին, հազիվ (թե), թերևս, հավանաբար, և այլն) ցույց են տալիս թեական, երկբայական վերաբերմունք: Ինչպես տեսանք, երկբայական վերաբերականները շատ են քանակով և տարբեր՝ իմաստային-ոճական երանգներով: Այս եղանակիչները, դրվելով բայի դիմավոր ձևերի, անգամ սահմանական եղանակի բայ-ստորոգյալների վրա, որոնք ցույց են տալիս խոսողի սուբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ, փոխում են նշված իմաստը՝

հաղորդելով այլ եղանակային իմաստ, այն է՝ թեականության, ոչ հավատիության եղանակային իմաստ:

Օրինակ՝ ***Գուցե*** *մի րոպե նաև քո հոգում*
Նրա խոսքերը արձագանք տվին.
Գուցե *ծերունու երգը ցավալի*
Տրտմություն ազդեց նաև քո սրտին... (ՀԹ, 3, էջ 78):

Բերված օրինակներն ասվածի վառ ապացույց են: Չնայած որ նախադասությունները կազմված են սահմանական եղանակով դրված բայստորոգյալներով, **գուցե** եղանակիչների առկայությունը փոխում է դրանց իմաստը՝ հաղորդելով երկբայական-հարցական երանգ:

Ըստ իմաստային-ոճական երանգների ակադեմիկոս Ս. Աբրահամյանը տարբերում է երեք տեսակ՝ երկբայական-հավանական, երկբայական-անհավանական, երկբայական-հարցական:

1. Երկբայական-հավանական: Հավանականության, թվացողության իմաստներ են արտահայտում կարծես (թե), կարծեմ (թե), ասես (թե), թերևս, երևի (թե) և այլ վերաբերականներ:

Օրինակ՝ *Եվ խաղաղ էր նրա կյանքը,*
Կարծես, աստծո օրհնանքը
Նըրա վերա իջել էր (ՀԹ, 3, էջ 28):

Հրսկա՛շուրջպարի բրռնած երկրնքում,
Հրթվում են, ասես էն մեծ հարսանքում... (ՀԹ, 3, էջ 83):

Յավից տաքացած էլ բան չեն հարցնում,
Թրռչում են, ասես ահից հալածված... (ՀԹ, 3, էջ 102):

Ասես թե բրնավ աշխարհ չէր եկած,
Եվ այսուհետև երբե՛ք, հավիտյան
Էլ չէր տեսնելու արևը նրրան... (ՀԹ, 3, էջ 123):

Էսպես կամեցավ աստված, երևի... (ՀԹ, 3, էջ 116):

Թերևս և քեզ յուր աղքատ դափում
Ներկայանում է մռայլ ծերունին... (ՀԹ, 3, էջ 78):

Բերված օրինակները պարունակում են սահմանական եղանակով դրված բայ-ստորոգյալներ, որոնք ցույց են տալիս հաստատ կատարվող, կատարված կամ կատարվելիք գործողություն, այն է՝ խոսողի կամ հեղինակի սոսկական օբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ: Երկբայական-հավանական **կարծես, ասես (թե), երևի, թերևս** եղանակիչների առկայության պարագայում դրանք փոխում են իրենց եղանակային իմաստը՝ օբյեկտիվության եղանակավորությունից վերածվելով սուբյեկտիվության եղանակավորության: Ահա սա էլ հենց եղանակավորող բառերին բնորոշ յուրահատկությունն է, այն է՝ եղանակային այնպիսի իմաստներ արտահայտելը, որը չկա սովորական եղանակային ձևերի (դիմավոր բայերով) իմաստներում:

2. Երկբայական-անհավանական: Անհավանականության իմաստ են արտահայտում իբր (թե), իբրև (թե) և այլ վերաբերականներ:

Օրինակ՝ *Պառկած է իբրև Թաթուլ իշխանը*
Նազելի կրնոջ գըլուխն իր կըրծքին,
Ու իբր ասում է՝ վե՛ր կաց, իմ հրեշտակ,
Թո՛ղ, որ սպանեմ ես էդ հըրեշին (ՀԹ, 4, էջ 54):

Պառկած է, ասում է ստորոգյալները սովորաբար ունեն սահմանական եղանակի իմաստ: Սակայն օրինակում համադրվելով **իբրև, իբր** եղանակիչների հետ՝ կորցնում են իրենց բնորոշ իմաստը և ստանում երկբայական, թեական, հնարավոր ոչ հավանական գործողությունների նշանակություն:

3. Երկբայական-հարցական: Այսպիսի վերաբերականները սովորաբար գործածվում են հարցական նախադասությունների մեջ և արտահայտում են խոսողի երկբայական վերաբերմունքը նախադասության

մտքի կամ որևէ անդամի վերաբերյալ: Դրանք են՝ գուցե (թե), միգուցե, արդյոք, միթե, չլինի (թե): Սրանցից յուրաքանչյուրն իր հերթին ունի մյուսներից տարբեր իմաստային-ոճական երանգ [1: 260–262]:

Օրինակ՝ *– Քեզ... քեզ կըհանձնեմ տիրոջ խնամքին,*
Իսկ ես հնազանդ նրա սուրբ կամքին,
Կըգնամ, հոգի՛ս, աշխատանք կանեմ,
Գուցե շուտով գամ ու քեզ էլ տանեմ... (ՀԹ, 3, էջ 38):

Գուցե թե գիշերն անքուն աչքերով
Ուզես իմանալ վիճակս աստղերով... (ՀԹ, 3, էջ 42):

Բերված օրինակներում **գուցե, գուցե թե** եղանակիչները մտքին հաղորդել են երկբայական-հարցական, ենթադրական երանգ:

Գեղարվեստական ոճում հաճախ է գործածվում **արդյոք** եղանակիչը, որը երկբայական-հարցական երանգից բացի երբեմն կարող է արտահայտել նաև հաստատում, մի քանի այլ դեպքերում նաև մտավախություն, ժխտում [4: 311]:

Օրինակ՝ *Ախտո՛ս, կտրիճ, ախ ո՞ւր եկար*
Էս աշխարհքը սև ու մութ.
Ո՞ր անօրեն մարդն էր արդյոք,
Տրվեց էդպես քեզ խորհուրդ (ՀԹ, 4, էջ 99):

Ուզեցի գըտնեմ մըտքի մի թափով,
Թե ի՛նչ էր արդյոք, էն ի՛նչ էր լինում... (ՀԹ, 3, էջ 119):

Թե արդյոք նըրա աչքերը անմահ
Նայո՞ւմ են ներքև, տեսնո՞ւմ են ինձ էլ,
Թե ո՛նց եմ ցավիս տակին կորացել... (ՀԹ, 3, էջ 122):

Ինձ ասա՛, հայր սուրբ, գաղտնիքը կենաց
Արդյոք օրենք է աստծուց սահմանա՞ծ... (ՀԹ, 4, էջ 58):

Գո՞րծ ունի արդյոք, հաջո՞ղ է գնում,
Արդյոք մի անգամ ինձ միտն է բերում,
Գիտե՞, թե օրերն ինչպես եմ համրում... (ՀԹ, 3, էջ 46):

Նշված տեսակի մեջ ամենագործածականը **միթե** եղանակավորիչն է, որը շատ հաճախ հարցական հնչերանգ է ունենում: Այն նախադասությանը հաղորդում է երկբայական-հարցական, ինչպես նաև անհամաձայնության, անսպասելիության, զարմացական, երբեմն նաև դժգոհության երանգներ: Երբեմն անսպասելիության և դժգոհության երանգը կարող է շեշտվել և մոտենալ ժխտման իմաստին, որը ոճական որոշակի երանգավորմամբ հաճախ արտահայտում է նաև ճարտասանական հարցում [3: 303]:

Օրինակ՝ *Միթե սա՞ է, տեր, քո տված կյանքը.*
Միթե ա՞յս էր ինձ համար պատրաստած... (ՀԹ, 3, էջ 46):

Բայց մի՞թե երկրում ես պիտի կորչեմ... (ՀԹ, 3, էջ 59):

Բայց մի՞թե նրանք ապրում են անմեռ... (ՀԹ, 3, էջ 136):

Հո (խոսակցական **խո, խում** տարբերակով) եղանակավորիչը հարցականով կարող է գործածվել հատկապես ժխտական նախադասություններում: Այս դեպքում խոսողն ցանկանում է կա՛մ ժխտել այդ երևույթը, կա՛մ իմանալ նրա իսկությունը:

Օրինակ՝ *Խոսեց ծերունին դառը խնդալով,*
Բա մեռած հո չենք, ապրում ենք, էլի,
Ամեն մեռնողի երանի տալով (ՀԹ, 3, էջ 72):

Ախպե՛ր, ասեցինք, ի՞նչ արիք իրար,
Խոսք եք կռվացրել, արին հո չարիք.
Համ ծեծել տրվիր, համ ըշտրափըդ առ,
Արի վերջացրու, բոլ էլավ, հերիք (ՀԹ, 3, էջ 75):

Հո՛ղեմ գլուխը... ես գերի հո չե՞մ... (ՀԹ, 4, էջ 12)։

– Հո՛ գիտեք, ասավ, ես էլ խըղճի տեր,
Չեմ ուզում ընկնեմ արինն էդ տըղի... (ՀԹ, 3, էջ 76)։

Համ էլ ընկա պարտքերի տակ.
Հո պոետի պարտքն էլ գիտես.
Էդ լոկ պարտք չի ուրիշի պես,
Այլ ազգային մի մեծ առակ... (ՀԹ, 3, էջ 133)։

Ես չասեմ, դու հո կարդացող մարդ ես,
Էն ո՞ր աստվածն է կարգ դըրել էսպես... (ՀԹ, 3, էջ 77)։

Սաստկական վերաբերականները կարող են դրվել նախադասության բոլոր անդամների վրա՝ շեշտելով և սաստկություն հաղորդելով դրան։ Միայն **իսկ** բառն է, որ չի կարող դրվել ստորոգյալի վրա։ Դրանք են՝ նույնիսկ, հենց, անգամ, մինչև իսկ, մինչև անգամ, իսկ, իսկ և իսկ, մանավանդ, նամանավանդ և այլն։

Օրինակ՝ *Դուրս եկա, տեսնեմ՝ Միհեն է կանգնած*
Մի սև ձի հեծած, թռավ ու գնաց.
Ետևուց կանչեցի՝ Միհե՛, կաց, արի՛.
Հենց այս կանչերումն աչքս բաց արի (ՀԹ, 3, էջ 43)։

Քու երեսից հենց նույն տարին
Իմ պաշտոնից ինձ դուրս արին (ՀԹ, 3, էջ 133)։

Ու բիրտ, վայրենի կանգնեց, ինչպես սար,
Էնժամ կիմանաս, թե ընչի համար
Թե՛ գող, թե՛ գազան, հենց դատարկ վախից,
Հեռու են փախչում նրրա փարախից (ՀԹ, 3, էջ 19)։

Սահմանափակման վերաբերականներն արտահայտում են գործողությունների հատկանիշների, առարկաների սահմանափակման իմաստ: Դրանք են՝ գեթ, գոնե, լոկ, միայն (թե), միմիայն, սոսկ, թեկուզ և այլն:

Օրինակ՝ *Քընած է աշխարհ, քընած է քամին.*
Անքուն չարքերը չեն միայն քընած... (ՀԹ, 3, էջ 21):

Եվ թե հաստատուն մի բան կա անմահ,
Արդյոք իմաստուն հոգին չի՞ միայն նա... (ՀԹ, 3, էջ 114):

Առաջին օրինակում ներկայացված է գործողության սահմանափակում է, իսկ երկրորդում՝ առարկայի:

Սահմանափակման վերաբերականների այլ օրինակներ՝

Արի՛, որդի՛, արի, դարձի՛ր,
Գեթ խնայիր քո խեղճ նանին... (ՀԹ, 3, էջ 29):

Եվ կատաղում էր, որ մի մարդ չըկար՝
Յուր ցավն սփոփեր, կամ գեթ հասկանար... (ՀԹ, 3, էջ 56):

Այն օտար երկրում որ հիվանդանաս,
Գոնե, ո՞վ պիտի քեզ սառը ջուր տա... (ՀԹ, 3, էջ 38):

Ոչինչ չեմ գտնում այլևս աշխարքում–
Լոկ խաբեություն և անմիտ տանջանք... (ՀԹ, 3, էջ 61):

– Սուտ բան է, քուրի՛կ, դու մի՛ հավատար,
Լոկ պատահական մի չար խոսք է սա... (ՀԹ, 3, էջ 91):

Իսկ մահը, կարծես, չոքել է կրծքիս,
Միմիայն խորափոս, խավար գերեզման,
Միմիայն դժոխքն է երևում աչքիս... (ՀԹ, 3, էջ 61):

Թեկուզ և մենակ լինի փարախում,
Աժդահա Սաքոն ընչի՞ց է վախում (ՀԹ, 3, էջ 13):

Ի՞նչ պետք է անի քեզ մի երեխա,
Թեկուզ իր տեղով հենց կըրակ դառնա (ՀԹ, 4, էջ 11):

Երբեմն հանդիպում է նաև ժողովրդախոսակցական **զուտ** բառը, որը ևս սահմանափակման նրբերանգ է հաղորդում խոսքին:

Օրինակ՝ *Նրա խանչալն և այնալին,*
*Որ արծաթով էր պատած **զուտ**,*
Տարավ հաղթողըն այն անգութ... (ՀԹ, 3, էջ 32):

Կամային վերաբերականները (թող, դե, հապա, ապա, մի և այլն) արտահայտում են խոսողի կամքը գործողության կատարման վերաբերյալ:

Օրինակ՝ *– Ապրես Ալեք, շատ ապրես,*
***Թող** աստված զորացնե քեզ...* (ՀԹ, 3, էջ 34):

Հովհ. Թումանյանը իր «Մերժած օրենք» պոեմում կիրառել է կրկնապատկություն ճարտասանական ձևը՝ մտքին թափ հաղորդելու, ինչպես նաև զգացմունքի չափը մեծացնելու նպատակով:

Օրինակ՝ ***Թող** այնուհետև քանդվի նա իսպառ,*
Նրա երեսին էլ կյանք չըծաղկի,
***Թող** մեռնեն մարդիկ, **թող** ուտեն իրար...*
Ես էլ չեմ խղճում այստեղ ոչ ոքի (ՀԹ, 3, էջ 61):

Բերված օրինակներում **զորացնե, քանդվի, մեռնեն** ըղձական եղանակով ստորոգյալները ունեն **թող** եղանակիչը, որը թեև չի փոխում խոսքի եղանակային իմաստը, բայց և օժտում է այն լրացուցիչ գաղափարով, այն է՝ կամքի ընդգծում:

Այլ օրինակներ՝ *Ապա ե՞ս, Միհե, ինձ ի՞նչ ես անում...* (ՀԹ, 3, էջ 37):

Չե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մրտնում՝
Հեկեկում ես դու գիշերվա մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարո ջան, Սարո՛... Սարո» ես ասում... (ՀԹ, 3, էջ 97):

Դե կամ **դեհ** եղանակիչներն արտահայտում են դժգոհություն, անբավականություն, երբեմն էլ՝ վճռականություն:

Օրինակ՝ *Դե հանի՛ր, ա՛ղջի,*
Վիճակն ի բարին,
Երգերով գովենք
Էն իգիթ յարին (ՀԹ, 3, էջ 90):

Դառն աշխատում ենք ու դատարկ նստում.
Գետինը ձգած սերմը չենք վերցնում...
Այս ընչի՞ կյանք է, դե՛ քեզ եմ հարցնում (ՀԹ, 3, էջ 37):

Հեղինակը «Մեհրի» պոեմում կիրառել է **դեհ** ժողովրդախոսակցական ձևը, որը մտքին անբավականություն, երբեմն նույնիսկ դժգոհություն կարող է հաղորդել:

Օրինակ՝ – ***Դե՛հ****, մնաք բարով, ծերունի հայրիկ,*
Նազելի Մեհրի, սիրուն հայրենիք,
Սրտակից տղերք, ընկեր-հարևան,
Մոտիկ բարեկամ, արյուն-ազգական... (ՀԹ, 3, էջ 41):

«Պոետն ու մուսան» պոեմում ևս մի քանի անգամ գործածվել է **դեհ** ժողովրդախոսակցական ձևը:

Օրինակ՝ ***Դեհ****, գընա՛, Մուսա՛...* (ՀԹ, 3, էջ 139):

– ***Դե՛հ****, մընաս բարյավ,*
Անսի՛րտ, անիրա՛վ... (ՀԹ, 3, էջ 140):

Հազվադեպ հեղինակը միանգամից համադրում է երկու տարբեր եղանակավորիչներ, դրանով իսկ ավելի շեշտելով իր վերաբերմունքը:

Օրինակ՝ *Հապա մի նայի՛ր հըսկա հասակին,*
Ո՛նց է մեկնըվել: Ասես ահագին
Կաղնըրքի լինի անտառում ընկած (ՀԹ, 3, էջ 18):

Զիջական վերաբերականները (ինչևէ, ինչևիցե, ինչ է որ, ինչ էլ լինի, համենայն դեպս, այնուամենայնիվ, այսուամենայնիվ, այնուհանդերձ, այսուհանդեպ, ի դեպ, ի միջի այլոց և այլն) արտահայտում են խոսողի զիջական վերաբերմունքը իրողության վերաբերմամբ:

Օրինակ՝ *Էսօրն ինչ է որ, – մի երեկ է նոր,*
Էսօրն էլ կանցնի, երեկ կըդառնա... (ՀԹ, 3, էջ 117):

Ժխտական վերաբերականները (ոչ, չէ, բնավ, ամենևին) կարող են գործածվել թե՛ նախադասության հետ, թե՛ իբրև պատասխանական բառ՝ ստանալով նախադասության արժեք: Ամենատարածվածը **ոչ** և **չէ** (ժողովրդախոսակցական) եղանակիչներն են, որոնք, ըստ էության, **այո** և **հա** հաստատական եղանակիչների հականիշներն են: **Չէ**-ն ավելի բնորոշ է ժողովրդախոսակցական ոճին, բայց հաճախ է գործածվում նաև գեղարվեստական գրականության մեջ: Թումանյանի պոեմներում ավելի հաճախ գործածվում է **չէ** եղանակիչը՝ պայմանավորված լեզվի ոճով:

Օրինակ՝ *– Ո՛չ, ո՛չ, նա գընաց, էլ ետ չի գալու,*
Եվ էդպես դու միշտ մեղք ես մընալու (ՀԹ, 3, էջ 118):

Չեն լսվում երբեք սուրբ հայրերի մոտ
Մարդոց խնջույքի ուրախ երգերը,
Եվ ոչ կանացի հայացքը խանդոտ
Հուզում է մեղքով խաղաղ սրտերը (ՀԹ, 3, էջ 53):

– Չէ՛, ասավ Մելիք, քու ամբողջ ազգով
Անց պիտի կենաս իմ թըրի տակով... (ՀԹ, 4, էջ 11):

– Սիրելի Մեհրի, չէ՛, ամեն երկրում
Մարդիկ այսպիսի նեղություն չեն կրում... (ՀԹ, 3, էջ 37):

Չէ՛, չեմ գտնում, հայր, աղոթքների մեջ
Եվ ոչ հոգեբուխ մեղեդիների,
Դարձյալ մնում է նա սաստիկ մի տենչ… (ՀԹ, 3, էջ 60):

Առանց հոգսերի ու առանց վըշտի
Խաղում էինք մենք էն երազ հովտում,
Ու թընդում էր հեշտ ծիծաղն ինձ ծաղրող.
– Չե՛ս կարող, չէ՛, չե՛ս կարող… (ՀԹ, 3, էջ 113):

Հեղինակը «Մեհրի» պոեմում յուրահատուկ ձևով օգտագործել է կրկնության հնարանքը, որով էլ ավելի է սաստկացրել ժխտումը:

Օրինակ՝ *– Այստեղ աշխատի՛ր, մի՛ գնալ, Մհե,*
Ինձնից հեռանալ չեմ թողուլ, չէ՛, չէ՛,
Լավ է միասին մեր ցավը քաշենք,
Քան իրար կարոտ, սիրտներս մաշենք… (ՀԹ, 3, էջ 37):

Ժխտական վերաբերականները կարող են գործածվել նաև մենախոսության մեջ և վերաբերել իր իսկ՝ խոսողի առաջադրած հարցին [1: 264]:

Օրինակ՝ *Աչքերը հանգչող կըրակին հառած՝*
Ծանըր է շնչում հովիվն ահառած,
Եվ վայրի հոգին լեռնական մարդու
Ալեկոծում է կասկածն ահարկու:
– Չէ՛, քամին էր էն… էն գիլի շըվաք… (ՀԹ, 3, էջ 21):

Բաղձանքի վերաբերականները (երանի (թե), երնեկ (թե), ուր է (էր), ուր է (էր) թե) արտահայտում են բաղձանք, իղձ, ցանկություն որևէ գործողության, երևույթի վերաբերյալ:

Օրինակ՝ *Էս հղթական լուրի վըրա քանդվեց սիրտը սիրունի.*
Ա՛խ, Սասունցի քաջ Դավիթը իմը լիներ երանի… (ՀԹ, 4, էջ 42):

Ա՛խ, երանի՝ ո՛վ մարդ կըգա
Ու մարդ կերթա անարատ (ՀԹ, 4, էջ 57):

Աղջի, բախտավո՛ր,
Երնե՛կ քու սերին,
Քու սարի սովոր
Սև-սև աչքերին (ՀԹ, 3, էջ 92):

Գեղարվեստական գրականության մեջ հանդիպում են դեպքեր, երբ միևնույն հատվածում մեկից ավելի եղանակիչներ են կիրառվում: Այս պարագայում, կարծում ենք, խոսքն էլ ավելի է խտանում, լիցքավորվում համապատասխան երանգավորմամբ:

Օրինակ՝ *Ապա ու՞ր են յուր զենքերը.*
Եթե, իրավ, իգիթ է նա,
Թող վեր կենա, ճամփեն գնա,
Թե մի ճամփորդ է նա հոգնած,
Կամ թե հովիվ անուշ քնած (ՀԹ, 3, էջ 31):

Թեկուզ Ալեքին չըգտնեն,
Գեթ մի ուրիշ հայ սպանել. –
Ալնի դասը միայն հանել (ՀԹ, 3, էջ 32):

– Այստեղ ի՞նչ կա, հայր, որ այստեղ աշխատեմ,
Հենց թեկուզ, ասենք, մնամ, աշխատեմ... (ՀԹ, 3, էջ 39):

Լոկ երա՞զ էր այս: Բայց երազն ի՞նչ է:
Երազ, թե իրոք – այդ միթե մի՞ն չէ... (ՀԹ, 3, էջ 114):

– Էն տադա՞նդը, էն ձի՞րքն հապա,
Որ տըվել եմ...
– Ա՛յ խաբեբա,
Ահա ես էլ էդ եմ լալիս.
Ինչո՞ւ էս ձիրքն էիր տալիս:
Չըգիտեի՞ր միթե այնժամ,

Թե ինչ աշխարք պիտի ես գամ։
Թող լինեի մի կեղեքող,
Հավաքեի միշտ փող ու փող… (ՀԹ, 3, էջ 130)։

Այսպիսով՝ եղանակավորող բառերը, դրվելով բայի դիմավոր ձևերի վրա, կա՛մ բայի դիմավոր ձևերի եղանակային իմաստներին հաղորդում են լրացուցիչ գաղափար՝ սաստկացնելով արդեն իսկ եղած եղանակը, կա՛մ նրանց եղանակային նոր երանգ ու նշանակություն են հաղորդում, այսինքն՝ մի եղանակային իմաստը փոխում են մեկ այլ եղանակային իմաստի։

Եթե բայի եղանակներն արտահայտում են խոսողի կամ հեղինակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ, որոնք սակայն շատ հաճախ բավարար չեն արտահայտելու խոսողի կամ հեղինակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ այն բոլոր վերաբերմունքները գործողության նկատմամբ, որոնք հնարավոր է արտահայտել, ապա այս բացը խոսքում լրացվում է եղանակավորող բառերի օգնությամբ։ Այսինքն՝ եղանակավորող բառերը խոսողի կամ հեղինակի ամենատարբեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքն են արտահայտում գործողության նկատմամբ։ Ահա սա էլ հենց եղանակավորող բառերին բնորոշ յուրահատկությունն է, այն է՝ եղանակային այնպիսի իմաստներ արտահայտելը, որը չկա սովորական եղանակային ձևերով (դիմավոր բայերով) արտահայտված իմաստներում։

ЛИТЕРАТУРА

1. *Աբրահամյան Ս.* Ժամանակակից գրական հայերեն։ – Երևան, 1981։
2. *Բաղինյան Խ.* Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն։ – Երևան, 2010։
3. *Եգենյան Լ.* Հայոց լեզվի ոճագիտություն։ – Երևան, 2006։
4. *Մկրտչյան Ռ.* Ժամանակակից հայերենի ձևաբանական ոճաբանություն։ – Երևան, 1992։

5. *Պողոսյան Պ.* Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքները, գիրք I: – Երևան, 1990:

СПИСОК СОКРАЩЕНИЙ

1. ՀԹ, 3 – *Հովհ. Թումանյան* Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Հ. III, Պոեմներ: – Երևան, 1989:
2. ՀԹ, 4 – *Հովհ. Թումանյան* Երկերի լիակատար ժողովածու տասը հատորով, Հ. IV, Պոեմներ: – Երևան, 1991:

ԵՂԱՆԱԿԱՎՈՐՈՂ ԲԱՌԵՐԸ ԿԱՄ ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆՆԵՐԸ ԽՈՍՔՈՒՄ, ԴՐԱՆՑ ՈՃԱԿԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ (ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՊՈԵՄՆԵՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա.Մ. Մխիթարյան
mkhitaryanarmenuhi@mail.ru

Բ.գ.թ., դոցենտ,
Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի մայրենիի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի դոցենտ
Երևան, Հայաստանի Հանրապետություն

ԱՄՓՈՓՈՒՄ

Եղանակավորող բառերը, դրվելով բայի դիմավոր ձևերի վրա, կա՛մ բայի դիմավոր ձևերի եղանակային իմաստներին հաղորդում են լրացուցիչ գաղափար՝ սաստկացնելով արդեն իսկ եղած եղանակը, կա՛մ նրանց եղանակային նոր երանգ ու նշանակություն են հաղորդում, այսինքն՝ մի եղանակային իմաստը փոխում են մեկ այլ եղանակային իմաստի:

Եթե բայի եղանակներն արտահայտում են խոսողի կամ հեղինակի օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքը գործողության նկատմամբ, որոնք սակայն շատ հաճախ բավարար չեն արտահայտելու խոսողի կամ հեղինակի օբյեկտիվ ու սուբյեկտիվ այն բոլոր վերաբերմունքները գործողության նկատմամբ, որոնք հնարավոր է արտահայտել, ապա այս բացը խոսքում լրացվում է եղանակավորող բառերի օգնությամբ: Այսինքն՝ եղանակավորող բառերը խոսողի կամ հեղինակի ամենատարբեր օբյեկտիվ կամ սուբյեկտիվ վերաբերմունքն են արտահայտում գործողության նկատմամբ: Ահա սա էլ հենց եղանակավորող բառերին բնորոշ յուրահատկությունն է, այն է՝ եղանակային այնպիսի իմաստներ արտահայտելը, որը չկա սովորական եղանակային ձևերով (դիմավոր բայերով) արտահայտված իմաստներում:

Բանալի բառեր՝ եղանակավորող բառեր կամ վերաբերականներ, ոճական կիրառություններ, ոճական առանձնահատկություններ, Հովի. Թումանյան, պոեմ:

MODAL WORDS IN SPEECH, THEIR STYLISTIC APPLICATION AND FEATURES (ON THE EXAMPLE OF A POEM BY HOVHANNES TUMANYAN)

A. Mkhitaryan
mkhitaryanarmenuhi@mail.ru

PhD, Associate Professor,
Associate Professor at the Chair of the Armenian Language
and its Teaching Methodology after Ashot Ter-Grigoryan
of Armenian State Pedagogical University after Khachatur Abovyan
Yerevan, Republic of Armenia

ABSTRACT

Modal words are used with personal forms of the verb, giving them additional meaning, reinforcing the already existing verb mood, or giving them a new shade and / or meaning, i.e., one modal meaning changes to another.

If the mood of the verb expresses the objective or subjective attitude of the speaker or author to action, which, however, is often not enough to express the objective and subjective attitude of the speaker or author to action that can be expressed, then this gap in speech is filled with modal words. Thus, modal words express the objective and subjective attitude of the speaker or author to the verb action. This is the peculiarity of modal words, namely: to express such a communicative coloring, which is absent in the forms of verb mood.

Keywords: modal words, stylistic application, stylistic features, H. Tumanyan, poem.

Информация о статье:
статья поступила в редакцию 06 декабря 2019 г.,
подписана к печати в номер 5 (9) / 2020 – 09.01.2020 г.